

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ.3/5

18.06.2010թ.

Ժամը 11.35

Նիստը վարում է Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը:

Գագիկ Բեգլարյան-Սկսենք մեր հարց ու պատասխանը:

Առաջին հարց՝ Պողոս Փլավյան, խնդրեմ:

Պողոս Փլավյան-Շնորհակալություն, հարցս ուզում եմ ուղղել քաղաքի գլխավոր ճարտարապետ պարոն Դանիելյանին, կապված նախորդ հարց ու պատասխանի ժամանակ հնչեցված անցումի հետ՝ Բաղրամյան պողոտայի և Օրբելի հանգույցի մոտ, որտեղ գտնվում են մի քանի դպրոցներ և երեխաների շատ մեծ զանգված ամեն օր իջնում և բարձրանում են այդտեղով: Պարոն Դանիելյանն անցած անգամ ասաց, որ երկու տարբերակ կա քննարկվող, կուզենայի իմանալ՝ ի՞նչ փուլում է գտնվում, քանի որ բյուջեով նախատեսված գումար ունենք դրա համար: Շնորհակալություն:

Գագիկ Բեգլարյան-Խնդրեմ, պարոն Դանիելյան, համեցեք:

Սամվել Դանիելյան-Ինչպես նշվեց, խոսքը վերաբերում է Օրբելի փողոցի և Բաղրամյան պողոտայի հատման անկյունում հետիոտնային անցման կազմակերպմանը: Այդտեղ քննարկվել էր, ինչպես ասացիք, 2 տարբերակ՝ վերգետնյա տարբերակը, որը բացառվեց, որովհետև այդտեղ միաժամանակ Բաղրամյան պողոտայի տեսանելիության խնդիրներն էին փակվում և արժեքով բավականին ավելի մեծ տարբերակ էր, ընդունելի չէր ճարտարապետորեն և քաղաքաշինորեն, մենք նախապատվությունը տվել ենք ստորգետնյա անցմանը: Այդ նախագիծն արդեն պատրաստ է: Նախագծում ներառվել է նաև կոյուղատարի տեղափոխման խնդիրը: Նախագիծը պատրաստ է, քննարկել ենք նաև շինարարության հնարավորության խնդիրը. նախատեսում ենք այս տարվա երրորդ եռամսյակում ձեռնարկել դրա շինարարական աշխատանքները: Շնորհակալություն:

Գագիկ Բեգլարյան-Քանի որ պարոն Դանիելյանը ամբիոնի մոտ է, կա՞ն հարցեր: Եթե կան՝ առանց գրանցվելու տվեք և լսենք պատասխանները: Խնդրեմ:

Նաիրա Նահապետյան-Ճիշտն ասած, մենք՝ բոլոր ավագանիներս, երեկ ստացել ենք նամակ՝ Երիտասարդական այգու հետ կապված: Կուզենայի պարոն Դանիելյանը ինչ-որ ձևով մեզ կարողանար կողմնորոշել, ինչպե՞ս ենք կարողանալու պատասխանել և ի՞նչ պետք է անել այս դիմումները:

Գագիկ Բեգլարյան-Խնդրեմ, պարոն Դանիելյան:

Սամվել Դանիելյան-Խոսքը վերաբերում է Ուսանողական այգում դեռևս 90-ական թվականներից գործող սրճարաններին: Այդտեղ որևէ նոր հասկացում՝ սրճարան կառուցելու կամ դրանց տարածքի ընդլայնման խնդիր չի քննարկվել: Խոսքը վերաբերել է միայն սրճարանների արդիականացմանը և, պիտի ասեմ, որ այդ խնդիրը ծագել է Վիկտոր Համբարձումյանի արձանի բացման ժամանակ պաշտոնապես ներկա մարդկանց կողմից: Խոսքը վերաբերել է ն՝ սրճարանների արդիականացմանը, ն՝ տարածքի արդիականացմանը: Ի սկզբանե, մենք այդտեղ ունեցել ենք միայն արձանի դիմային հատվածում գոյություն ունեցող ջրավազանի վերացման խնդիրը, որը արգելում էր նրա մոտեցումները, բայց այդպիսի հարցադրման պարագայում, բնականաբար, մենք ընդառաջ էինք գնացել և փորձել ենք այդ խնդիրը լուծել: Մասնավորապես՝ սրճարանի տաղավարներն Աբովյան փողոցի կողմից առանցքի նկատմամբ գտնվում էին իրար շատ մոտ, ընդամենը 4.5 մետր հեռավորության վրա: Նախագծով նախատեսված էր, որ առանցքի նկատմամբ նրանց միջև եղած հեռավորությունը մեծացրել էին և դարձրել էին մինչև 10.5 մետր, նրանք ունեին 4.5 մետր: Նորից եմ կրկնում, որևէ լրացուցիչ հողահատկացում չի եղել: Պահպանվել է նաև նրանց կառուցապատման տոկոսը, ինչքան որ եղել է ն՝ թե՛ նախագծով և թե՛ տեղում, որևէ ծառահատման երևույթներ չի նախատեսված, եթե խոսքը վերաբերում է դրան:

Նաիրա Նահապետյան-Պարոն Դանիելյան, սարսափելին այն է, որ մեծ աղմուկ է բարձրացել ծառահատման հետ կապված: Ես սրա համար կուզենայի, որ Դուք ավելի ամփոփիչ ձևակերպեիք կամ թղթերը ներկայացնեիք, կամ ընդունեիք այդ երիտասարդներին, որ կարողանայինք հարցը ինչ-որ ձևով լուծել:

Գագիկ Բեգլարյան- Լավ, ավելի հանգամանալից և ավելի մանրամասն կներկայացնեմ ես: Երևի պետք է մեկ անգամ ևս ներկայացնել, որ բոլորի համար վերջնականապես պարզ լինի: Խոսքը, տիկին Նաիրա, մի քանի երիտասարդների «Մենք ենք այս քաղաքի

տերը» անունով նախաձեռնության մասին է: Նախ սկսեմ նրանից, որ արտառոց ոչինչ չկա ու բոլորը՝ և՛ ավագանին և՛ քաղաքապետարանի աշխատակազմի անդամները, պետք է տեղյակ լինեն, որ նրանք ավելի շուտ քաղաքականացված, քաղաքապետարանի աշխատանքը վարկաբեկելու ուղղություն վերցրած մի քանի երիտասարդներ են: Իրենց իսկ անվանումից արդեն երևում է, թե իրենք որքան են սիրում մեր քաղաքը: Այստեղ բոլորդ մտավորականներ եք. «Մենք ենք այս քաղաքի տերը»՝ ո՞ր քաղաքի մասին է խոսքը: Իրենք մոռանում են, որ նախ Երևանում են և երկրորդ՝ քաղաքի տերը մենք բոլորս ենք՝ ժողովուրդը: Ավագանին, քաղաքապետը, քաղաքապետարանի աշխատակազմն է առաջիկա 3 տարիներին ղեկավարելու քաղաքը՝ ուզեն թե չուզեն:

Մենք ղեկավարելու ենք, իսկ տերը լինելու են բոլորը, մեր համաքաղաքացիները: Ինչի՞ մասին է խոսքը. Վիկտոր Համբարձումյանի արձանի բացման օրը, բոլորս էլ նկատեցինք, որ նախկինում՝ 90-ական թվականներին կառուցված սրճարանից դեպի Վիկտոր Համբարձումյանի արձանը տանող ընդամենը 3 մետր լայնությամբ ճանապարհ էր: Տեղում համոզվեցինք, որ 90-ականներին տրված որոշումը ճիշտ չէր եղել, եղել էր ի վնաս այգու: Սեփականատերերը հրավիրվեցին քաղաքապետարան, խնդիր դրվեց, որ իրենք իրենց սեփական հողից, իրենց իսկ սրճարանի 8 մետր տարածքից հրաժարվեն՝ յուրաքանչյուր կողմից 4-ական մետր: Արդյունքում՝ դեպի արձան տանող ճանապարհի լայնությունը դարձավ 11 մետր: Բոլորն էլ կվկայեն, որ դա հոգուտ այգու, հոգուտ Վիկտոր Համբարձումյանի արձանի է արվել: Քաղաքապետարանը հասավ նրան, որ կարողացավ սեփականատիրոջը ստիպել, որ հրաժարվի իր տարածքից: Հասանք նրան, որ նա հրաժարվեց և 8 մետր վերադարձրեց այգուն: Փոխարենը մենք նրան թույլատրեցինք, որ նա իր բավական անշուք, հնաժամ սրճարանը վերանորոգի, սակայն ավելի ցածր և ավելի փոքր տարածքով, որպեսզի այգու և քաղաքի տեսքը չխաթարվի: Ինչ մնում է Տերյան փողոցի հարակից հատվածին, ապա այստեղ էլ 90-ական թվականներից սրճարան էր գործում: Սրճարանի սեփականատերը, վերակառուցման թույլտվություն ստանալու նպատակով, դիմեց քաղաքապետարան: Այստեղ այլ մոտեցում էր. սեփականատերը խնդրում էր գործող սրճարանի նույն մակերեսով, սակայն ստորգետնյա հատվածում շինարարություն իրականացնելու թույլտվություն:

Մենք համարեցինք, որ մոտեցումը սխալ չէ. ինչո՞ւ ոչ, եթե մարդիկ նոր աշխատատեղեր են բացում առանց այգու հաշվին նոր տարածք զբաղեցնելու: Վերգետնյա հատվածի մակերեսն անփոփոխ է մնում: Որևէ ծառահատում, ծառահատման թույլտվություն չի

եղել: Բարձրացված հարցը քննարկելու նպատակով շուրջ 25 հասարակական կազմակերպությունների ղեկավարների հրավիրեցինք քաղաքապետարան: Ես ինքս հանդիպել եմ բոլորի հետ, բացատրել խնդրի էությունը: Նրանց ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը: Մարդիկ հասկացան, շնորհակալություն հայտնեցին ու գնացին: Մնացին 3 երիտասարդ, ովքեր համառորեն ոչինչ չէին ուզում հասկանալ, որովհետև իրենք, ինչպես ես եմ ենթադրում, ունեին կոնկրետ հանձնարարություն: Ոչ մեկին մենք թույլ չենք տա, որ քաղաքականացնեն, ստվեր գցեն հոգուտ Երևան քաղաքի մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների վրա: Բոլոր այն աշխատանքների, որ Ձեզ հետ միասին մենք 1 տարի շարունակ 18-ժամյա աշխատանքային ռեժիմով կատարել ենք ու հասել այսօրվա կարգավիճակին: Թույլ չենք տա, որ քաղաքականացնեն և փորձեն ստվեր գցել Երևանի քաղաքապետարանի, նաև ավագանու աշխատանքների վրա: Գիտեմ, վաղը տարբեր կերպ է ներկայացվելու այս խնդիրը, լինելու են այլևայլ մեկնաբանություններ: Երեկ մամուլում հայտնվեց սուտ տեղեկատվություն, թե նամակը ավագանուն չի ներկայացվել: Կա՞ մարդ, որ չի ստացել այն: Փաստորեն, սա նշանակում է, որ նրանք, այս նամակը ուղղելուց հետո, արդեն սուտ հայտարարություններով են հանդես գալիս: Իմաստն այն չէ, որ իրենք ուզում են ինչ-որ բան փոխել հոգուտ Երևանի: Հիմքում քաղաքականություն է ընկած: Առայժմ պարզ չէ, թե ինչ քաղաքական ուժի է ավելի շատ շահեկան այս մասին խոսելն ու աղմուկ բարձրացնելը, բայց ես, հավատացեք, սրանով նաև ուրախանում եմ. Ուրեմն՝ ամբողջ Երևան քաղաքում մնացած բոլոր աշխատանքները նորմալ են ու այլ թեմաներ չունեն խոսելու: Մեկ տարվա մեր աշխատանքի ընթացքում միայն այս հարցն է, որ այսպես աղմուկ է բարձրացրել: Այնինչ, աղմուկի կարիք չկա: Գուցե մարդիկ մտածում են, թե սխալ որոշո՞ւմ է կայացվել: Որոշումը սխալ չէ. մենք այդ կերպ փորձել ենք հոգուտ Երևան քաղաքի լավ բան անել: Ուրիշ բան էլ արեցինք 10 օր առաջ: Քաղաքապետարանի միջոցներով Վիկտոր Համբարձումյանի արձանի պատվանդանը մի քիչ էլ բարձրացրեցինք ու ճանապարհը լայնացրեցինք: Դրա մասին ոչ ոք չի խոսում: Այսօր Վիկտոր Համբարձումյանի արձանը ավելի պատշաճ տեսք ունի: Նախկին նախագծողները, պատվիարատուն Ակադեմիան է եղել, չափերը լավ չէին հաշվարկել, մի քիչ ցածր էր: Զգալի ծախսեր ենք կատարել, արձանի շուրջը սալահատակվել է և արձանն ու հարակից տարածքը բերվել է պատշաճ տեսքի: Մենք պետք է աշխատենք այնպես, որ ընդհանրապես Երևան քաղաքում ժողովուրդը ինչ-որ տերեր չունենա: Մենք

ղեկավար ենք, ժողովուրդն է մեզ ընտրել, տեր չենք, ժողովուրդն է մեր տերը: Երբ խոսում ենք Երևանի մասին, բոլորս էլ անպայման ասում ենք՝ Երևանս, մեր Երևանը: Բոլոր երգերում Երևան բառը հատուկ է ընդգծվում: Քաղաքի տերը բոլոր երևանցիներն են, մեզ էլ հանձնարարել են, որպեսզի մենք ղեկավարենք, մեզ ընտրել են, որ մենք ղեկավարենք: 3 տարի հետո ժողովրդի դատին կներկայացնենք, թե ինչպես ղեկավարեցինք: Եթե ղեկավարման ընթացքում մենք շատ սխալներ գործենք, հոգուտ Երևանի քիչ աշխատենք՝ 3 տարի հետո մենք չենք ընտրվի: Իսկ այսօր թող ոչ ոք չփորձի մեր որոշումների մեջ փոփոխություններ մտցնել, որովհետև որոշումներն ընդունում են ավագանին և քաղաքապետը:

Կա՞ն հարցեր, խնդրեմ:

Հրաչ Պողոսյան-Ես նույնպես, օգտվելով առիթից, որ պարոն Դանիելյանը կանգնած է, ուզում եմ 2 նախագծի մասին հարց տալ և հարցս այն իմաստն ունի, դրանք քաղաքաշինական խորհրդում քննարկվելո՞ւ են, թե՞ ոչ, և քաղաքաշինության հանձնաժողովը այդ նյութերին կարող է ծանոթանալ և կարծիք ստեղծել: Խոսքը վերաբերում է Սարյան փողոցից մինչև Մաշտոցի պողոտա՝ Գլխավոր պողոտայի նախագծին, որտեղ նույնպես վտանգավոր խնդիրներ կան, որովհետև ծառեր կտրելու խնդիրներ կարող են լինել և Կաթողիկե եկեղեցու շրջակայքի նոր նախագիծը: Այդ 2 նախագծերը կդրվե՞ն, արդյոք, քաղաքաշինական խորհուրդում լուրջ քննարկման, թե՞ ոչ:

Գագիկ Բեգլարյան- Չի լինելու որևէ լուրջ նախագիծ, որն իրականացվի առանց քաղաքաշինության խորհրդում քննարկելու: Քաղաքաշինության ոլորտում երբեմն իսկապես ծառերի հատման խնդիրներ են առաջանում: Դուք, որպես ճարտարապետ, պարոն Պողոսյան, գիտեք, որ տեղեր կան, որտեղ ծառերը իսկապես խանգարում են քաղաքաշինությանը: Մենք ծառ հատելու նպատակ չունենք, նոր մոտեցում ենք կիրառելու: Այսօր արդեն կանաչապատմանը և ծառերի խնամքին անհրաժեշտ բավական տեխնիկա ենք ստացել, երեկոյան կներկայացնենք հանրությանը, բոլորը կտեսնեն: Կունենանք նաև ծառ տեղափոխող մեքենա, որի միջոցով, անհրաժեշտության դեպքում, ծառը հատելու փոխարեն իր արմատային համակարգով այլ վայր կտեղափոխվի: Այսինքն, եթե մի կազմակերպություն ցանկանա որևէ տեղ քաղաքաշինական ծրագիր իրականացնել, ապա այդ ծրագիրը նախ կքննարկվի քաղաքաշինության խորհրդի նիստում, և եթե մեր քաղաքաշինության հանձնաժողովի

անդամները հավանություն տան, այդ դեպքում միայն կտրվի թույլտվություն: Սակայն այդ դեպքում էլ ոչ մի ծառ չի տուժի. ծառը կտեղափոխենք, օրինակ, 10 մետր այս կամ այն կողմ, որ չխանգարի շինարարական աշխատանքներին: Բացի դրանից, կընդունենք համապատասխան որոշում, որ տեղափոխումից հետո, եթե ծառը չշարունակի աճել, ապա չորացած յուրաքանչյուր ծառի դիմաց 5 նոր ծառ կտնկվի: Ամբողջ աշխարհում, Եվրոպայում ես ինքս էլ եմ ականատես եղել, թե որքան գեղեցիկ է այս տեսանկյունից կառուցապատումը. ասես այնպես է նախագծվել, որ շենքը հենց ծառերի մեջտեղում լինի: Հարցնում եմ. «Լավ, այստեղ ծառ չի՞ հատվել?», պատասխանում են, որ՝ ոչ, տեղափոխվել է: Մենք, չգիտես ինչու, դեռ հին մեթոդներով ենք աշխատում. եթե քաղաքաշինությանը ծառ է խանգարում՝ ապա անպայման դրա միակ լուծումը հատելն է: Այդպես չէ, ծառ չի հատվելու: Բնապահպանության վարչության պետն այստեղ է և կվկայի, որ Երևան քաղաքում կան նաև ծառեր, որոնք արդեն 50 տարուց ավել իրենց կյանքը ապրել են: Մենք հիմա համագործակցում ենք գիտնականների հետ, համագործակցում ենք այն մարդկանց հետ, ովքեր տիրապետում են ոլորտին, մասնագետների հետ: Նրանց եզրակացության դեպքում միայն ծառ կհատվի, սակայն պայմանով, որ հատված ծառի տեղում նոր ծառ տնկվի: Այսօր ծառեր կան, որ վթարային են, վտանգավոր: Մեկ ամիս առաջ ուժեղ քամուց ծառ շրջվեց, երկու երեխա վնասվեցին: Բայց եթե մեկ ամիս կամ հինգ օր առաջ եթե ասեինք, թե այդ ծառը վտանգ է ներկայացնում և պետք է հատել՝ մեծ աղմուկ կբարձրանար: Մենք նաև չպետք է ընկնենք ծայրահեղության մեջ. եթե ծառը առողջ է, սակայն խանգարում է քաղաքաշինական կոնկրետ ծրագրի՝ այն պետք է տեղափոխվի:

Այս թեմայի շուրջ կա՞ն ուրիշ հարցեր:

Սամվել Դանիելյան-Երկու խնդրի վերաբերյալ էլ նյութերը պատրաստվում են՝ նախագծային և ցուցադրական, որպեսզի ներկայացնենք քաղաքաշինական խորհուրդ: Պատրաստ լինելու պարագայում, կարծում եմ, ամենաուշը հաջորդ շաբաթվա ընթացքում, կներկայացնենք:

Գագիկ Բեգլարյան- Վերադառնանք մեր հարցերի հերթականությանը. Ջիվան Պողոսյան:

Ջիվան Պողոսյան-Հարգելի գործընկերներ, հարգելի պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է բնապահպանության ոլորտին:

Հաղթանակ թաղամասում գտնվում է արտադրողական հանգույց, որն ընկնում է Աջափնյակ վարչական շրջանում: Այդտեղ որոշվել է լինի աղբավայր, որտեղ որ հիմա գործում է աղբավայր, հիմա երկու վարչական շրջանների աղբը կուտակվում է այդտեղ և ներկայիս պահին ծխում է և ամբողջ թաղամասը գարշահոտության և ծխի մեջ է: Աղբավայրը ընդամենը 500 մետր է բնակտարածքից հեռու:

Ինչքանտ՞վ է ճիշտ, և ո՞վ է որոշել, որ այդտեղ պետք է լինի աղբավայր և այս խնդիրը կա, որ ժողովուրդն անընդհատ անհանգստության մեջ է: Շնորհակալություն:

Գագիկ Բեգլարյան-Հարցին ո՞վ է պատասխանում, Խաչատրյան, համեցեք:

Գագիկ Խաչատրյան-Հարցին տեղյակ եմ պարոն քաղաքապետ, երեկ չէ առաջին օրն ահազանգ ստացանք, որ աղբավայրը ծխում է, մենք անմիջապես ահազանգեցինք, մեքենաներ ուղղարկեցինք, աղբավայրն օրինական է՝ գրանցված է, Աջափնյակ վարչական շրջանի աղբը տեղափոխում է աղբավայր:

Գագիկ Բեգլարյան- Իսկ լուծումը ո՞րն է, ի՞նչ էք պատրաստվում անել:

Գագիկ Խաչատրյան-Աղբի ինքնաբռնկման երևույթներ են լինում ինչպես Աջափնյակի աղբավայրում, այնպես էլ Նուբարաշենի աղբավայրում, դրա համար համապատասխան շերտի առկայության պայմաններում ծածկվում է հողածածկույթով: Մենք հիմա հանձնարարում ենք հողածածկույթով ծածկել, որպեսզի չչարունակվի նախկին վիճակը:

Գագիկ Բեգլարյան- Այսինքն՝ մենք կարող ենք ավագանուն տեղյակ պահել, որ այդ աշխատանքները կատարվում են, հողածածկույթով կծածկվի և առաջիկա օրերին արդեն բնակչության համար վտանգ ներկայացնող ծխալու այդ երևույթը կվերացվի:

Գագիկ Խաչատրյան-Այո, համապատասխան հանձնարարական ես տվել եմ կոմունալ ծառայության պետին և վարչական շրջանի ղեկավարին նույնպես:

Գագիկ Բեգլարյան-Կա՞ն հարցեր:

Զիվան Պողոսյան-Պարոն քաղաքապետ, կուզենայի իմանալ ինչքանտ՞վ է նպատակահարմար այնտեղ աղբավայր լինի, քանի որ այդտեղ բոլորն, իրոք, սննդի արդյունաբերող օբյեկտներ են և գտնվում են այդ օբյեկտների մեջտեղում և նախկինում աղբավայրը եղել է Աշտարակի ճանապարհին՝ Սասունիկ գյուղի դիմաց, հետո չգիտեմ ինչու տեղափոխվել է, նոր աղբավայր է կառուցվել, մեծ ձոր է, լցվում է ձորի մեջ և այդ ամենը շատ մոտ է և՛ տնտեսվարողներին, և՛ բնակիչներին: Հետագա ինչ-որ ծրագիր, ուսումնասիրություն տեղափոխելու վերաբերյալ այդպիսի լուծում կտրվի՞:

Գագիկ Բեգլարյան-Պարոն Պողոսյան, այդտեղ աղբավայրի տարածք հատկացնելու մասին որոշումը կայացվել է նախկինում: Այսօր այդ աղբավայրը ունի խնդիր և այդ խնդիրը արագ պետք է լուծվի, որովհետև ես գիտեմ, թե ինչ է արտադրում այդ ծովիսը և ինչ է դա իրենից ներկայացնում բնակչության համար: Լուծումը, իհարկե, կգտնենք, բայց եթե կան այլ առաջարկներ տեղափոխման հետ կապված՝ ներկայացրեք: Կներկայացնենք համապատասխան մասնագետների քննարկմանը, և եթե անհրաժեշտ լինի տեղափոխել, դա էլ անհնարին չէ: Որոշումն ընդունվել է երևի տասնյակ տարիներ առաջ: Քանի՞ տարվա պատմություն ունի:

Գագիկ Խաչատրյան- Մոտ 12 տարվա:

Գագիկ Բեգլարյան-12 տարի առաջվա որոշումը, հնարավոր է, այսօր արդեն արդիական չլինի: Ձեր առաջարկով, մասնագետների ներկայացմամբ հնարավոր է լինի նաև փոփոխություն: Իսկ այսօրվա ծխալու խնդիրը մենք պետք է արագ լուծենք: Կա՞ն այլ հարցեր:

Գագիկ Խաչատրյան-Պարոն քաղաքապետ «Ֆիրտնեխ» ընկերությունը երբ-որ Երևան քաղաքում իրականացրեց ուսումնասիրություն, առաջարկություն եղավ, որ փակել աղբավայրերը մնացած և պետք է միայն գործի Նուբարաշենի աղբավայրը: Ուղղակի ժամանակի խնդիր է, հետագայում այդ աղբավայրը կփակվի:

Ջիվան Պողոսյան-Շնորհակալություն:

Գագիկ Բեգլարյան- Շնորհակալություն: Ռուսլան Բաղդասարյան:

Ռուսլան Բաղդասարյան-Հարգարժան քաղաքապետ, հարգելի գործընկերներ, Դավթաշենի կամուրջը կապիտալ վերանորոգման կարիք ունի, ե՞րբ հնարավոր կլինի վերանորոգել այն:

Գագիկ Բեգլարյան-Պարոն Բաղդասարյան, իսկապես Ձեր բարձրացրած հարցը կարևոր է: Դավթաշենի կամրջի հետ կապված մենք ունենք մասնագետների համապատասխան եզրակացությունը: 2011 թվականի բյուջեով եթե Դավթաշենի կամրջի նորոգման համար գումար չհատկացնենք՝ խնդիրներ կունենանք: Գիտեք, թե 2010 թվականի բյուջեն ինչպես հաստատվեց: Լավ կլինեք, որ 2010 թվականին կարողանայինք այս նպատակով գումար հատկացնել: 2011 թվականին մենք՝ բոլորս միասին, պետք է ամեն ինչ անենք, որ հարցը տեղ գտնի 2011 թվականի բյուջեում: Խնդիրն այն է, որ կամրջի ջրահեռացման համակարգը ժամանակին ճիշտ չի նախատեսվել: Հարցը շատ կարևոր է և բոլորիս օրակարգում պետք է լինի 2011

թվականի Երևան քաղաքի բյուջեն հաստատելիս: Մենք այսօր անհրաժեշտ գումարի չափն էլ գիտենք, ունենք նախահաշիվը, ունենք նախագիծը, մնում է, որ բյուջեով նախատեսենք և 2011 թվականի սկզբին սկսենք աշխատանքները:

Ռուսլան Բաղդասարյան- Շնորհակալություն:

Գագիկ Բեգլարյան-Վարդագարյան Մարտին:

Մարտին Վարդագարյան-Հարգելի քաղաքապետ, հարգելի գործընկերներ, ես չգիտեմ, ճիշտն ասած, իմ հարցը թե՛ առաջարկ է, թե՛ խնդրանք, և առաջին հերթին վերագրվում է մեր հանձնաժողովին, բայց քանի որ այստեղ հարց կլինի նաև ծախսերի վերաբերյալ, դրա համար ես համարձակվում եմ դիմել այս պահին Ձեզ:

Ինչպիսի՞ հնարավորություններ կան մի միջոցառում անցկացնել ամռանը՝ այգիներում փողային նվագախմբերի փառատոն, գոնե մեկ շաբաթով բոլոր փողային նվագախմբերը կմասնակցեն այդ փառատոնին և ես կարծում եմ, դա հաճելի անակնկալ կլինի երևանցիների համար: Իհարկե, դա կապված է նաև ծախսերի հետ:

Գագիկ Բեգլարյան- Շնորհակալություն: Իսկապես հիասքանչ կլինի: Տիկին Թումանյան, զբաղվեք այդ ուղղությամբ, որպեսզի մատուցողի առաջարկը կարողանանք իրականացնել: Մենք այսօր, երևի տեղյակ եք, բարերարների միջոցով փողային գործիքներ ենք ձեռք բերում: Ուզում ենք 12 վարչական շրջաններում էլ փողային նվագախմբեր ունենալ: Մի քանի օր առաջ հրավիրել եմ մասնագետների, զրուցել ենք: Երիտասարդ երաժիշտները քիչ են, որպեսզի 12 վարչական շրջաններում էլ նվագախմբեր ունենանք, բայց աշխատանքներ են տարվում: Կհասնե՞նք մենք դրան, տիկին Թումանյան:

Էլեանորա Թումանյան - Այո, «Էրեբունի-Երևան» տոնակատարության ժամանակ մենք կունենանք 8 լիարժեք նվագախումբ, բայց կարծում եմ, որ 2011 թվականին 10-ը կունենանք, 12-ը՝ դեռ ոչ:

Գագիկ Բեգլարյան - Հիմա մենք այդ 8 նվագախմբերը կարողանո՞ւմ ենք մինչև «Էրեբունի-Երևան»-ը տեսնել մեր այգիներում: Թող մասնագետները տեսնեն, գնահատեն, թե ինչպես են նվագում, մեր վարպետները լսեն: Անպայման կազմակերպեք:

Էլեանորա Թումանյան-Այս օրերին, Դուք գիտեք, որ այդ փողային գործիքների հանդիսավոր հանձնումն է լինելու և այդ օրը 5 նվագախումբ արդեն հանդես կգա լիարժեք, մնացածը դեռ սկզբնական կարգավիճակում են, կմասնակցեն նույնպես, կհրավիրենք պարոն Վարդագարյանին, անպայման:

Գագիկ Բեգլարյան-Միայն Վարդագարյանին չէ:

Էլեանորա Թումանյան-Բոլորն են հրավիրվելու:

Գագիկ Բեգլարյան-Պարոն Վարդագարյան, մենք Ձեզ կհրավիրենք, Դուք՝ Ձեր բոլոր գործընկերներին, պայմանավորվեցի՞նք:

Մարտին Վարդագարյան- Շնորհակալություն, դա կլինի իսկապես հաճելի անակնկալ երևանցիների համար:

Գագիկ Բեգլարյան- Շնորհակալություն, կա՞ն հարցեր, խնդրեմ:

Պողոս Փլավյան- Պարոն քաղաքապետ, այնտեղ մի քանի հարց էր ինձ մոտ նշված, երբ-որ անցանք ըստ պատասխանողների բաց թողնվեց, եթե կարելի է հնչեցնեմ հարցը:

Գագիկ Բեգլարյան- Խնդրեմ:

Պողոս Փլավյան-Ուրեմն, երկրորդ հարցի հետ կապված ես գրավոր կներկայացնեմ պարոն Մելքունյանին, քանի որ ինքը ներկա չի և երրորդ հարց կար, տրանսպորտային հարց էր, ըստ էության, անմիջապես մեր գործառույթների հետ չի կապակցված, քանի որ «Լուսանշան» ՊՈԱԿ-ը մեր ենթակայության տակ չէ, այլ ոստիկանության: Բայցևայնպես, տրանսպորտային խնդիրները քաղաքում մերն են և բազմաթիվ տեղեր կան, ես հիմա մեկը կնշեմ: Օրինակ, ունենք Լենինգրադյան-Կիևյան կամուրջի կողմից երբ-որ գալիս ենք ուրեմն դեպի Աթենք ենք թեքվում և Լենինգրադյանով շարունակում ենք դեպի Շինարարներ և այլն, այդ հանգույցում հիմա վերաձևակերպում են արել, նշանները փոխել են, և աջակողմյանը մի ուղղություն է և շատ հաճախ, գրեթե միշտ այդտեղ կուտակումներ են լինում՝ հասնում է մինչև Հալաբյան փողոց, այսինքն՝ գրեթե 100, 150 մետր և այդ փողոցում ունենք հնարավորություն, այսինքն՝ 2 հատ ձախ է տրված դեպի Աթենքի փողոց և 1 հատ դեպի աջ՝ դեպի Շինարարներ, Լենինգրադյանով շարունակելու համար: Այդտեղ փողոցը քանի որ տարողունակությունը բավականին մեծ է, կարելի է 2 ձախ և 2 աջ նախատեսել՝ հանդիպակաց գոտու հաշվին, որովհետև մուտքերն այն կողմից հավասարապես 2 հատ են և լրիվ բավարարում են: Այդպիսի լուծում տրված է նաև Պռոշյան-Բաղրամյանում, ինչպես նաև նախկին «Շիրակ» գաստրոնոմի կողմից, որ գալիս ես Լենինգրադյան նույնպես այդտեղ, եթե հնարավոր է ներկայացնենք առաջարկ, մի քանի այդպիսի տեղեր, որտեղ որ իսկապես որոշակի բարդություններ կան երթևեկության, որպեսզի

փոփոխությունները համապատասխան հաշվի առնեն և հնարավորության դեպքում նաև կիրառեն: Շնորհակալություն:

Գագիկ Բեգլարյան-Այդ առաջարկը կարող էք մեր տրանսպորտի վարչությանը ներկայացնել, պարոն Ադամյան, թող ուստիկանությունն էլ իր եզրակացությունը տա ու, եթե տրամաբանորեն դա աշխատող առաջարկ է, որոշումով այն կարողանանք փոխել: Խնդրեմ:

Հրաչ Պողոսյան- Հարցը չի ձայնագրվել տեխնիկական խոտանի պատճառով:

Գագիկ Բեգլարյան - Խնդրեմ պարոն Պողոսյան, դա էլ նույն կերպ. առաջարկը ներկայացրեք, կքննարկենք: Խնդրեմ:

Աստղիկ Գևորգյան-Շնորհակալություն: Եվրոպական շատ երկրների եկեղեցիներում հատկապես՝ կիրակի օրերին դասական երաժշտություն են հնչեցնում սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: Մենք այսօր այնպիսի վիճակ ունենք, որ անհրաժեշտ է օտար մեղեդիներին հակադարձել դասական երաժշտությունը: Արդյո՞ք կա հնարավորություն եկեղեցիներում նաև հնչեցնել դասական երաժշտություն՝ այդ մեկ: Մենք ունենք երիտասարդական սիմֆոնիկ նվագախմբեր, նրանք սիրով կարող են նվագել և երկրորդը՝ դառը փորձ ունենք արձանները դնենք հետո փոշմանել՝ չհավանել: Գեղարվեստական խորհուրդները վերացան, ես հասկանում եմ, որ սա քաղաքապետի ենթակայության հարցը չէ և քաղաքապետարանի հարցը չէ, բայց արդյո՞ք կարող է քաղաքապետարանը ավագանու նախաձեռնությամբ հանդես գալ, որպեսզի արձանները նախքան տեղադրելը դրվեն հասարակական քննարկման, երևանցին մասնակցի, թե ինչ արձան է նախատեսվում, մանրակերտը դիտի: Մենք ունենք Եղեռնի հուշարձանի օրինակը, երբ Ճարտարապետների տանը ամբողջ երևանցիները շքերթով գալիս էին և իրենց կարծիքները թողնում էին գրած, թե ով ինչ կարծիք ունի, ինչ դիտողություն, ինչ առաջարկություն: Ինչքան էլ որ Վիկտոր Համբարձումյանի արձանի կողքերը լավացնեք, բարձրացնեք, Վիկտոր Համբարձումյանի արձանը դրանից չի շահելու, երևանցին չի ընդունում այդ արձանը, դա Վիկտոր Համբարձումյանը չէ, չեմ ուզում նախորդ արձանների անունները տալ, ունե՞նք արդյոք հնարավորություն այդ հարցը բարձրացնել Կառավարությունում, չգիտեմ, չեմ տիրապետում գծագրերին:

Գագիկ Բեգլարյան-Տիկին Գևորգյան, մենք գիտենք, որ այդ խնդիրը կա, գեղարվեստի խորհուրդ արդեն ստեղծել ենք: Մինչև իմ քաղաքապետ ընտրվելը կառավարության կողմից Վիկտոր Համբարձումյանի արձանի հետ կապված

աշխատանքներն արդեն հանձնարարվել էին Ակադեմիային, պարոն Մարտիրոսյանն էլ հանձնարարել էր քանդակագործին: Երբ մենք սկսեցինք միջամտել՝ այդ ամենը արդեն պատվիրած էր ու Ակադեմիան պնդում էր, որ հենց այդ քանդակը լինի: Նույն Ակադեմիան պնդում էր նաև, որ դեպի արձան տանող ճանապարհը պետք է բացվի, լայնացվի: Սակայն նույն Ակադեմիան վերջերս թուղթ էր ստորագրել, թե այս ի՞նչ է կատարվում: Դրա համար մենք գեղարվեստի խորհուրդ արդեն ստեղծել ենք, գրեթե բոլոր հասարակական միությունների ղեկավարները կան այդ խորհուրդում և, եթե անհրաժեշտ լինի, մենք անպայման կդնենք հանրության քննարկմանը, խնդիր չունենք: Ավագանին թող իմանա. որ մենք կարող ենք հարցերը նաև հանրաքվեի միջոցով լուծել ու լավ կլինի, որ մի քանի կարևոր խնդիրներ, որոնք ամեն օր, ամեն վայրկյան առնչվում են բոլորիս՝ դնենք հանրության քննարկմանը: Ինչո՞ւ չէ՝ կարող ենք նաև հանրաքվե անցկացնել:

Աստղիկ Գևորգյան-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, ես ներողություն եմ խնդրում, նույնը վերաբերում է նաև Պանթեոնին: Պանթեոնը ոչ միայն գերեզմանոց է, այլ նաև Երևան քաղաքի ամենապատվավոր մասը և այնտեղ շատ տարբեր ոճեր կան, տարբեր չափեր, գնահատանքներ ու ներկայացումներ: Ես կուզենայի, որ Պանթեոնը նույնպես մտներ այս չափերի մեջ:

Գագիկ Բեգլարյան-Անպայման, դա իրականություն է, և այդ խնդիրները պետք է անպայման լուծվեն:

Եթե չկան հարցեր, շնորհակալություն մասնակցության համար: Ցտեսություն :

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ